

ՀԱՅ ԱԼՔԻՄԻԱՆ

(Կ. Ղաֆադարյան—Ալքիմիան պատմական Հայաստանում.

Արմֆանի հրատ., Երևան, 1940 թ., էջ 163, գինը 12 ռուբ.)

Ալքիմիկոսները, ինչպես հայտնի է, աշխատում էին ոչ ազնիվ մետաղներից ստանալ ազնիվ մետաղներ—առաջին հերթին՝ ոսկի: Եղել են ալքիմիկոսներ, որոնք ջանացել են գտնել կամ մշակել թանգարժեք քարեր: Վերջապես ալքիմիկոսները հաճախ զբաղվել են ծերերին «երիտասարդացնելու» փորձերով: Դրանց մեջ մեծ էր շուլատանների թիվը: Միջին դարերում ալքիմիկոսները համարվում էին «չար ողիներին» հետ գործ ունեցող մարդիկ և շատ անգամ հալածվում էին եկեղեցու թեկադրանքով, որպես վհուկներ և կախարհներ: Այնուամենայնիվ հեռու անցյալում ալքիմիկոսների մեջ կարելի է գտնել ուշագրավ դեմքեր: Նախնական քիմիային դրանք են զարկ տվել: Որոշ վայրերում դրանք հանդես են եկել որպես մետաղագործության, ուսումնասիրական փորձերի, պրիմիտիվ գիտություն ունեցող բանասերների: Դրանք ուսումնասիրել են հին ձեռագրերը, ձեռնարկել են կրոնականների կողմից դատափետվող հետադուռություններ, մշակել են զանազան դեղեր, մետաղներ, աղեր, ներկեր... Կան հին գրավյուրներ, ուր հենց այդպես էլ նկարագրվում է ալքիմիկոսը—բավական մեծ արհեստանոցում՝ շրջապատված գրքերով, անոթներով, լաբորատորիական պարագաներով: Կարելի է ենթադրել, որ այդ ալքիմիկոսները բավական ունևոր են եղել, գուցե շատ սերտ կապված քաղաքային բուրժուազիայի բարձր խավերի հետ: Ահա թե ինչու հին ալքիմիական ձեռագրերի ուսումնասիրության միջոցով կարելի է հասկացողություն կազմել ոչ միայն հնագույն օրերի նախապաշարունակների և պրիմիտիվ գիտության, այլ նաև առևտրի ու տնտեսության մասին: Արմֆանի նոր հրատարակությունը հենց դրա համար էլ հետաքրքրական աղբյուր է—մի նոր աղբյուր, որ հնարավորություն է տալիս պարզել հայ կուլտուրայի պատմության տակավին շատ քիչ լուսաբանված էջերը: Բանասեր Ղաֆադարյանի այդ ուսումնասիրությունն այնքան էլ սովոր չէ: Ալքիմիական ձեռագրերից հանված մի քանի քաղվածքներին կցված է շատ համառոտ մի ներածական նախաբան՝ բաղկացած ընդամենը 54 էջից: Դա ավելի շուտ թողցրիկ մի էսքիզ է քան ուսումնասիրություն: Ղաֆադարյանը ինքը քիմիկոս չէ և այդ պատճառով սահմանափակվել է ձեռագրերի նկարագրություն: Նախաբանի մեջ չկա ոչ մի ակնարկ արևմտյան և արևելյան հին ալքիմիական գրականության մասին: Ղաֆադարյանը կանգ չի առնում նաև մինչ այժմ հրատարակված գիտական ուսումնասիրությունների վրա: Վերջապես, նախաբանի մեջ չի նկարագրվում պատմական ֆոնը: Չնայած

այդ թերություններին, որպես առաջին փորձ, նրա գիրքը խոշոր արժեք ունի: Ղաֆաղարյանի թուղթիկ ակնարկը և ապա գրքի տեքստային մասը ցույց են տալիս, որ, էին հայկական քաղաքներում ալքիմիան անցյալում համարվել է «պատվավոր» ու «բարձր» գիտություն:... «Պարտ է մարդկանց —ասված է մի ձեռագրում,—որ զարուեստս այս գործեն՝ իմաստուն լինին...»:

Ալքիմիկոսների մասին խոսվում է մեծագույն հարգանքով:... «Պարտ է մարդկանց, ասում է ձեռագրի հեղինակը,—որ զարուեստս զայս գործեն մտացի իցեն, և նուրբ, և խորու հասկանան և իմանան...»:

Ալքիմիկոսներից մի քանիսը էնցիկլոպեդիական կրթություն պիտի ունենային, թեև կրոնական մտայնությամբ հավատարիմ են եղել անգամ առաջավոր ալքիմիկոսները: Ալքիմիկոսների աստրոլոգիական պրպտոմները հատկապես կապված են եղել միշտ կրոնական գաղափարախոսություն հետ: Այդ մասին կան բազմաթիվ տվյալներ նորերս հրապարակված մի ուսումնասիրությունյան մեջ (Գալքե—«Աստրոլոգիա և կրոն»):

Հին Հայաստանում, ինչպես նաև ուրիշ արևելյան երկրներում, ալքիմիկոսները խոշոր գործնական աշխատանք են կատարել: Հատկապես հենց դրա համար էլ նրանք մեծ համբավ են վայելել: Ալքիմիայի մասին առաջին անգամ հիշատակում են 12-րդ դարի կիլիկյան հեղինակներ Սարգիս Շնորհալին և Ներսես Լամբրոնացին: Հավանական է, հենց առևտրական բանուկ ճանապարհների վրա գտնվող քաղաքներում էլ հանդես են գալիս հեղինակավոր ալքիմիկոսներ—գյուտարարներ: Հայ հին քաղաքացիներին հայտնի էին բազմաթիվ թարգմանություններ՝ արաբերենից, պարսկերենից, լատիներենից: Այդ թարգմանություններն արդեն ցույց են տալիս, որ քաղաքներում ապրող արհեստավորների և վաճառականների համար ալքիմիան ունեցել է գործնական նշանակություն: Հայ ալքիմիկոսներն էլ, արևելյան բոլոր ալքիմիկոսների նման, զբաղվել են մետաղների ձուլման, օքսիդացման, լուծման փորձերով:

Ղաֆաղարյանն իր նախաբանի մեջ հիշեցնում է, որ ալքիմիկոսները ժամանակին զբաղվել են մի շարք նյութեր՝ կիր, օճառ, ապակի, կավ, ձեթեր, աղբրի այլևայլ լուծույթներ, խեժեր, յուղեր, ձյուղ, թափաք ստանալու վերաբերյալ խնդիրներով ու գործողություններով (էջ 27): Ահա հենց այդ գործնական արժեքն էլ նկատի առնելով՝ քաղաքային բնակիչները ալքիմիան համարում էին պատվավոր «արհեստ»—«յոյժ գերագոյն քան զամենայն արուեստս»—«և պարծանք, պատուական և ազնիւ»... Դա, իհարկե, «ծածուկ» արվեստ էր—գաղտնիքները հաղորդվում էին ըստ երևույթին ալքիմիկոսների մոտերիմ աշակերտներին: Անհրաժեշտ է հիշել, որ միջնադարյան ցեխերից—համալսարաններից շատերը նույնպես ծածուկ էին պահում արհեստի առանձին գաղտնիքները: Վենետիկյան և ջենովական օլիգարխիական իշխանություններն այդ մասին հատուկ կանոններ էին մշակում: Վենետիկի մոտ, Մուրանո կղզու վրա հին ժամանակ կային հմուտ ապակեգործների արհեստանոցներ: Արհեստավորները համարվում էին պատվավոր քաղաքացիներ, անգամ ազնվականներ, բայց այդ արհեստավորներից ոչ ոք իրավունք չուներ արհեստի գաղտնիքները հաղորդել ուրիշ երկրի մարդկանց: Երբ 16-րդ դարում մուրանցի արհեստավոր Ջիորջիո Բալլերի-

նոն փախչում է Գերմանիա, վենետիկյան իշխանության ներկայացուցիչները երկու տարի որոնելուց հետո գտնում են նրան և սպանում¹։ Ալքիմիկոսները, մի քանի «ռեցեպտներ» նկարագրելուց առաջ, հարգանքով հիշում են նաև աստուծո անունը։ Բայց կապված լինելով արհեստավորների և քաղաքային ամբողջ բուրժուազիայի հետ, ալքիմիկոսներից շատերը իշխող կրոնական ավատապետության դեմ մղված պայքարի օրերին ավելի հաճախ կանգնած են եղել ընդդիմադրական հոսանքների բանակում։ Ազատախոհ իմաստասերների թիվը համենայն դեպս զրանց մեջ եղել է բավական մեծ։ Միջնադարյան աշխարհի հերոսներից մեկի՝ Պարացելսի մասին (16-րդ դար) պատմում էին, որ նա եղել է զարմանահրաշ բժիշկ, մարգարե, ոսկի շինող ալքիմիկոս, կախարդ։ Պարացելսը իր գաղտնի-արվեստի միջոցով ցանկացել է նաև երկարացնել մարդու կյանքը։ Նման ուրիշ գործիչներ էլ շատ են եղել։ Նույնիսկ ենթադրություն կա, որ Ֆաուստի մասին մի շարք լեգենդներ կառուցվել են այդօրինակ գործիչների կյանքի մասին տարածված պատմվածքների ազդեցություններից։ Տակավին 15-րդ դարում զրանցից շատերը հանդես էին գալիս որպես ազատախոհ գործիչներ։ Մի բանասեր (Բելցկի) նկատում է, որ հենց զրանց շարքերից են ելնում հոլմանիցմի ակտիվ պրոպագանդիստներ. զրանք են զանազան քաղաքներում դասախոսություններ կարդում հին պոետների մասին, քայքայում են նախնական կրոնը։ Այդ միևնույն բանասերը հիշատակում է նաև զրանց դեմ՝ բողոքող մի կրոնականի՝ զայրալից բանաստեղծության մասին։ Այդտեղ կրոնականը ասում է, որ ալքիմիկոսները ավելի շատ հավատում են Յուլիանոսին, քան թե մարգարեների ուսմունքին և Քրիստոսի գիտությունը, Բաքոսը զրանց համար աստված է, կարդում են Վերգիլիոսին, փոխանակ Պոդոս առաքյալին կարդալու...»։ Միևնույն 16-րդ դարում գրում էին, որ Ֆաուստն էլ հերետիկոս-կախարդ է։ «Այդ Ֆաուստը, — ասում է 1531-ին Սերասաիան Ֆրանկը — միատիֆիկատոր է, Մանիխեի հետ միասին նա ենթադրում է, որ իրականում Քրիստոսը չէր կարող ոչ ծնվել և ոչ էլ մահանալ... Հին Կտակարանի աստվածը չար աստված է... կան երկու աստվածներ...» Իտալական և գերմանական քաղաքներում այդօրինակ թափառող գիտուններ, ալքիմիկոսներ, գուալիստական ուսմունքների հետևողներ շատ կային։ Դանի որ հայ ալքիմիական ձեռագրերից շատերը լատիներենից են թարգմանվել, ըստ երևույթի հենց կիլիկյան քաղաքներում, ապա ակներև է, որ ձեռագրերի մեջ կարող են լինել ակնարկներ նաև ազատախոհ հին գործիչների մասին։ Կիլիկյան քաղաքներում եղել են իտալական քաղաքացիների գաղութներ, որոնք Այասում ունեին նույնիսկ սեփական ինքնավար մարմիններ։ Չմոռանալ, այն էլ, որ թոճերակյան շարժումների հայտնի ղեկավարի ուսուցիչը եղել է պարսիկ բժիշկ։ Դժբախտաբար բոլոր այդ հարցերը մնում են առանց քննության և լուսաբանության Ղաֆադարյանի շատ արժեքավոր գրքի մեջ։ Նա շատ խոշոր գործ է կատարել լույս աշխարհ հանելով հայ կուլտուրայի պատմության կարևորագույն աղբյուրներից մեկը։ Լավ թե վատ, հին հայաբնակ արևելյան քաղաքներում տակավին պրիմիտիվ

¹ Свешников, „Тайны стекла“.

գիտության ներկայացուցիչների դերերում ժամանակին հանդես են եկել ալքիմիկոսներն էլ: Անցյալի մուսլ ու մթին օրերին դրանք արտահայտել են քաղաքային բնակչության որոշ խավերի շահերն ու մտածությունները: Ժողովածուի մեջ տպագրված քաղվածքները անկատար են: Ալքիմիական ձեռագրերի գիտական ուսումնասիրության համար անհրաժեշտ է քննել բոլոր ձեռագիր աղբյուրները: Բայց այդ քաղվածքներն էլ շատ բան են տալու: Այդտեղ նկարագրվում են՝ հեղուկներ, ներկեր, նախնական քիմիայի մեթոդները, մետաղաձուլման ձևերը և այլն: Սեղմ՝ ռեցեպտների մեջ էլ կան ակնարկներ հին արհեստագործության մասին: Պարզ է, որ հետազայում ձեռագրերի ուսումնասիրությունը պիտի կատարվի քիմիադեաների և պատմագիրների միասնական ջանքերով:

Շատ արժեքավոր են նաև ժողովածուի նյութերը, քաղաքային բնակչության առօրյա—աշխարհաբար գրական լեզվի ուսումնասիրության համար: Հին ալքիմիական գրքերի լեզուն շատ յուրահատուկ լեզու է: Ալքիմիկոսները և հայ բժիշկները կարողացել են մշակել փոքր ի շատե պարզ, գրական-գիտական մի նոր լեզու, մշակել են տերմիններ, ուրույն ոճ: Էլ չեմ խոսում այն մասին, որ այդ լեզվի վերլուծությունը հնարավորություն է տալիս պարզել հայ ժողովրդի կուլտուրական կապերը հարևան ժողովուրդների հետ:

Արտ. Կարինյան